## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N-16-Ա

## ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սարչապետ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 23-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Սմբատ Էդիկի Պալաքյանից ստացված դիմումը և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը

**Սարչապետ համայնքի ավագանին որոշում է.**

Սարչապետ համայնքի բյուջեի 09.4.1 <Բարձրագույն մասնագիտական կրթություն> /ուսման վարձ/ ծրագրի 4729 հոդվածից 2014-2015թթ ուս. տարվա 2-րդ կիսամյակի ուսման վարձ փոխանցել Երևանի պետական համալսարան ՊՈԱԿ-ին՝ 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ՝ Սմբատ Էդիկի Պալաքյանի համար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ
2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
3. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
5. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
6. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ
7. ՏՈՄԵՅԱՆ ՍՈՒՍԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N-17-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ կետով՝

*Սարչապետ համայնքի ավագանին որոշում է.*

1.ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2015 թվականի առաջին եռամսյակում Սարչապետ համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրականացված վարչական հսկողության ժամանակ կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:

3.Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին և ավագանուն:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ
2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
3. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
5. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
6. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ
7. ՏՈՄՆՅԱՆ ՍՈՒՍԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N-18-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ կետերով՝

*Սարչապետ համայնքի ավագանին որոշում է.*

Սարչապետ համայնքի բնակիչ Գուրգենի Սուրիկի Մխոյանին ազատել իրեն պատկանող ՎԱԶ 21900-1 34DO850 պետհամարանիշը կրող ավտոմեքենայի 61220 /վաթսունմեկ հազար երկու հարյուր քսան/ ՀՀ դրամ գույքահարկից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ
2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
3. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
5. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
6. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ
7. ՏՈՄԵՅԱՆ ՍՈՒՍԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

20 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N-19-Ն

## ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի <ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

***Սարչապետի գյուղական համայնքի ավագանին որոշում է.***

1.Սարչապետի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի <Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին> թիվ 35-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն.

Սարչապետ համայնքի 2015 թվականի բյուջեի 01.1.1 կառավարման ապարատ ծրագրի 4215 հոդվածի 3-րդ եռամսյակից 2-րդ եռամսյակ տեղափոխել 36000 /երեսունվեց հազար/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ
2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
3. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
5. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
6. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ
7. ՏՈՄԵՅԱՆ ՍՈՒՍԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2015թվականի N-20-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 18 -ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սարչապետ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 23-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խմբերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ *Սարչապետի գյուղական համայնքի ավագանին որոշում է.*

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ

3. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

4. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ

5. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ

6. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

7. ՏՈՄԵՅԱՆ ՍՈՒՍԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

07200957

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարչապետ համայնքի ավագանու
2015 թվականի ապրիլի 20-ի N -20-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Ստելլա Սուքիասյան Պետրոսի 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ,
( Անուն, ազգանուն,հայրանուն)

Ընդամենը՝ 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

Սարչապետ համայնքի ղեկավարի օգնական՝ Անժելա Մարտիրոսյան